

իւր հոգւոյ զօրութիւնքը՝ որ մեզ ամենիս առաջնորդում և  
պնշտպանում է: Բայց ի՞նչ է ասած մեր պատմութեան վեր-  
ջում. «երթ և դու արա նոյնպէս»: Այս խօսքը մեզ համար ևս  
ասած է — մենք ևս այդպէս պիտի անենք: Մի ասէ՛ք թէ մեզ  
չեն հանդիպում աւազակների ձեռքն ընկածներ, որ օգնենք:  
Նայենք մեր շուրջը, ամեն ուրեք կգտնենք այդպիսիք: Մի  
գարձիւք ձեր երեսները այդպիսիներից, մի հեռացէ՛ք սառնա-  
սրտութեամբ և մի թողէ՛ք այդպիսեաց վշտի մէջ: Մի բաւա-  
կանացէ՛ք նորանով և մի միտարեցէ՛ք ձեզ թէ ժամանակ,  
կարողութիւն և առիթ չունինք օգնելու, մի ասէ՛ք թէ մենք  
մեր մերձաւորներն ունինք, մեր ընտանիքը, մեր ազգականնե-  
րը, մեր հասարակութիւնը . . . : Մեր մերձաւորը թող նա  
լինի, ով աչքերն արցունքով լիքն ասում է, ազատի՛ր ինձ, փր-  
կի՛ր ինձ. ամէն:

Տիկիս.

ՍԱՀԱԿ ԲԱՀ. ՍԱՀԱԿԵԱՆՑ.

## ՊԱՏՄԱԿԱՆ

### ՎԵՐԱՆՆՈՒԹԻՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ\*)

Այն օրից, երբ Հայաստանը վերջնականապէս կորցրեց իւր  
քաղաքական անկախութիւնը, չղադարեցան շարունակ նորա  
միջից հայրենի կրօնի և ազգութեան համար եղած մշտատանջ  
և գարեւոր պատերազմները:

Բնական էր, ուրեմն, որ այդ ստկաւաթիւ ազգը դեգերուած  
և նեղուած իւր շրջակայ անհամար մահմետական ցեղերի ձեռ-  
քին, զգար և խոստովանէր, թէ անհրաժեշտ է իւրեան կապել  
իւր գոյութիւնը մի քրիստոնեայ հզօր ազգութեան կեանքի  
հետ:

(\*) Կովկասեան պատերազմ. հեղինակութիւն Վ. Պօտուշի, հատոր Գ.  
Պարսկական պատերազմ 1826—28 թ. գիրք Ե. Պետեր. 1882 թ.

Բայց ոչ մի տեղից օգնութիւն սպասել կարելի չէր։ Արեւելքից, հարաւից և արեւմուտքից մահմետական ցեղերն էին ամուր պատնէշի նման բաժանել նորան քրիստոնեայ աշխարհից։ Հիւսիսումը իւր նման տառապում էր քրիստոնեայ վրաստանը, այժ ցունելով դիմագրիւ շարունակ յարձակմունքներին և միայն Կովկասեան շղթաների միւս կողմը գտնուում էր մի զօրեղ տէրութիւն, որ սասանեցրել էր թաթարներին և իւր իշխանութիւնը տարածել էր մինչև Վօլգայ մեծ գետի բերանը, մինչև Կասպից ծովի ափները։ Այդ իսկ պատճառաւ Հայաստանի աչքը ձգտում և յառում է դէպի հիւսիս։

Հայերը շատ վաղուց էին վաճառականական յարաբերութիւն սկսել Մոսկովայի տէրութեան հետ, դարերի հետ յառաջանում էին նորանոր խաղաղութեան գաշինքներ երկու ազգերի մէջ—նորանոր արտօնութիւններ, որ Ռուսաց թագաւորները շնորհում էին հեռաւոր հարաւի այս վաճառաշահ ազգին։ Այժ քսէյ Միխայլովի թագաւորի օրերը նշանաւոր եղան Հայերի համար թանկագին մի կարգ հրովարտակներով և արքունի հրամաններով, որոնցով և ամրացաւ Հայերի բարոյական և նիւթական կապը Ռուս ազգի հետ։

Մեծն Պետրոսն առաջինը քաղաքական տեսակէտից աչք դարձրեց Հայերի վերայ, նորա հանճարը նախատեսեց Ռուսաստանի ապագայ դերը Հայազգի վիճակը տնօրինելու։ Եւ ահա այս իսկ բոլորից սկսում է Ռուսաց թագաւորների եռանդուն քաղաքականութիւնը Հայոց աշխարհի վերաբերութեամբ։

Դեռ Ռերբէնդի պատերազմից շատ յառաջ Ղարաբաղի մէկ լիքներից մի քանի պատգամաւորութիւններ գիմում են Պետրոսին նորա պաշտպանութիւնը խնդրելու։ Նոքա միաձայն հաւատացնում էին, թէ Ռուսաց զօրքն իւրեանց մօտենալուն պէս Հայ աւագանիքը զօրաժողով կանեն Նախիջևանումը և թագաւորական դրօշակը վերցրած՝ 24 ժամի մէջ կհալածեն անհաւատներին, իսկ 15 օրուայ մէջ կաիրեն ամբողջ աշխարհքին։ Երեւանն առնելն այն ժամանակ շատ հեշտ կըլինի, հաստատում էին նոքա, որովհետեւ այնտեղ մեծ քաղմութիւն կայ Հայերի և նոցա ձեռքին է վաւօդի պահեստն և ուրիշ պաշարները։ Վերջապէս տաւում էին, Հայաստանը կարող է մինչև 116000 զօրք գուրս բերել, ըստ որում թուրքահայերն էլ օգ-

նութիւնը կը հասնեն պարսկահայերին։ Այն օրից, երբ Գերբէնդը նուաճուեց Ռուսաց սրի տակ և Ռուսական բանակը պատրաստուեցաւ տիրել պարսկաստանի հիւսիսային գաւառներին, կարծես թէ Հայի ազատութեան արշալոյսը աւելի փայլուն և լուսաւոր ճառագայթներ սկսեց արձակել։

Արդէն 12000 Հայեր Ղարաբաղի մէլիքներէ առաջնորդութեամբ և 30000 վրացիք իւրեանց Վախթանգ Թագաւորի հետ միասին պատրաստ սպասում էին Գանձակումը Ռուսաց Թագաւորի հրամանները կատարելու։

Հրճուում էր այս քրիստոնեայ բանակը, նոցա կարծիքով աներկբայ եկել հասել էր պարսկական լծից իւրեանց ազատութեան ժամը։ Սակայն կայծակի հարուածից աւելի խիստ հնչեցաւ նոցա ականջին այն բօթաբեր լուրը, թէ Պետրոսը չվերջացրած իւր սկսած գործը՝ վերադառնում է Գովկասից։ Ինչպէս Հայոց Յսայի մետրապօլիտը վկայում է, նոքա հաւատ ընծայել չէին կամենում այդ լրին և չէին էլ կարողանում հասկանալ, թէ ինչ պատահեցաւ ոմանք ասում էին, թէ Ռուսները տկարացան և վերադարձան, այլք թէ սաստիկ շոքից նոցա հեծելազօրքի ձիանքը կոտորուեցան, միւսները՝ թէ ծովումն ալեկօծու թիւն է պատահել և թնդանթօթաձիգ զօրքը իւր պաշարով ջրանոյգ է եղել։

Դերբենդից Պետրոսի ահալընկալ վերադարձը խորին վիշտ պատճառեց հայ և վրացի զօրքերին։ Նոցա եռանդը մեռաւ։ Վախթանգն իւր բանակովը յետ եկաւ, շատ լքաշեց լեզզինները պաշարեցին Տփլիսը, առան և աւերեցին։ Ղարաբաղի մելիքները ամրացած լեռների անառիկ ամրոցներում մի քանի տարիներ տնկուն դիմադրութեամբ սարսափելի պատերազմներ մղեցին ազատութեան համար ծաճկաց, Պարսկաց և լեռնական լեզզի հրգոսակների դէմ։

Պետրոսի յուսով Հայոց սկսած այս պատերազմը, թէ և Պետրոսից պաշտպանութիւն չչառաւ, սակայն սկիզբը դարձաւ նոցա համար անկախութիւն ձեռք բերելու անվերջ փորձերին։

Անդրկովկասի քրիստոնեայ ազգաբնակչութիւնների համար մի ծանր հաջուած եղաւ այն, որ Պետրոսը ծաճկաց հետ կապած պայմանին համաձայն իւրեան սեպհականեց միայն Գոս-

պեան ակունքը, իսկ Հայոց և Վրաց բոլոր գաւառները թողեց Տաճկական բարձրագոյն Դրանը, որն ի հարկէ ամենայն իրաւամբ, գրգռած էր քրիստոնէից դէմ դէպի Ռուսաստանը նուցա տածած համակրութեան համար:

Թշուառութեան ամպերը կուտակուել էին չարաբաստիկ աշխարհի գլխին: Ռուսաստանը չէր կարողանում զէնքով նորան օգնել: Դեռ նորա հզօր զօրութիւնը ընդարձակելու ժամը չէր հասել: Դեռ այդ ժամանակն նա ինքն էլ նոր էր սկսում ամրապնդուիլ. բայց և այնպէս հայ ազգի վիճակն ըստ աւաջնոյն անմիւտանալի էր կայսեր սրտին և նա բաց արեց լայն և արձակ իւր կայսրութեան դռները հայ գաղթականութեան առաջին:

Ռուսները տիրելով Դերբէնդին, Բագուին, Աստրաքատին, Գիլանին և Մաղանդարանին պէտք է հոգային որպէս զի իւրեանց ձեռք բերած այս երկիրները պինդ պահպանեն նիւթական բարօրութեան արդիւնքներով և խաղաղ գործ ունենութեան պտուղներով, և ահա այս վսեմ սկզբունքը դարձաւ Պետրոսի ապագայ քաղաքական ծրագրի հիմունքը. և նա ամենայն ջանք ի գործ դրեց քաշել հայերին դէպի այս երկիրները: Ահա ի՞նչ է գրում Պետրոսը Մատիւշկինին՝ նոր տիրապետած երկիրներում մարդաբնակութիւնն աւելացնելու համար. «Ամենայն կերպիւ աշխատեցէք հրաւիրել Հայերին, իսկ միւսուլմանների թիւը, որքան հնար է, պակասեցնել, բայց այնպէս գաղտնի միջոցներով, որ իւրեանք ոչինչ չհասկանան»:

Եւ ահա ի հրաւէր Պետրոսի հարիւրաւոր Հայեր ձգտում են դէպի Դիլան և Սուրբ Խաչի բերդը:

Գրում էր Պետրոսն իւր մերձաւորներին, որ նոր գաղթածներին ամենատեսակ արտօնութիւններ շնորհեն, ամենալաւ հողերը, ուր նոքա ցանկանան, նորանց յատկացնեն, հարստահարութիւններից և ճնշումներից պաշտպանեն. — «Ըստ որում — գրում է մեծ կայսրը — մենք ընդունել ենք այդ Հայ ազգին մեր կայսերական առանձին ողորմածութեան և հովանաւորութեան ներքոյ»:

Առհասարակ այն ժամանակուան բոլոր վկայագրերի մէջ պարզ արտայայտուում է Պետրոսի հայեացքը, թէ ի՞նչ օգուտ էր սպասում նա խելացի և վաճառաշահ հայ ազգին ռուսաց կայսրութեան մէջ վերաբնակեցնելուց:

Առաջին անգամի գաղթականներից 700 մարդոց չափ անմիջապէս մոտան ռուսաց զինուորական ծառայութեան մէջ և կազմեցին երկու առանձին գնդեր, Հայերը՝ Դրաբուլնի և Վրայիք՝ Հոլսարի գունդը:

Բայց այն ինչ Հայոց մի աննշան մասը ապաստան էր գտել ռուսաց սահմաններումը, ամբողջ ազգաբնակչութիւնը հեծում էր նեղութեան մէջ. նորա ուժից վեր էր կռուել մահմետականութեան հետ և նա օգնութիւն էր խնդրում: «Մինչև ցայսօր, գրում են Հայերը Պետրոսին, չորս կողմից շրջապատուած լինելով թշնամիներով, մենք պաշտպանուում էինք, որքան մեր ոյժը ներում էր, իսկ այժմ Տաճիկները մեծ զօրքով եկել տիրել են պարսկական շատ քաղաքների . . .»

Դժբաղդաբար այս վերջին պատգամաւորութիւնը կենդանի չըգտաւ ռուսաց հանճարեղ կայսերը:

Պետրոսի յաջորդների անվստահ քաղաքականութեան շնորհիւ հայազգի վիճակն աւելի դառնացաւ:

Ֆեդկմարշալ իշխան Դօլգորուկովն ինքն է վկայում այն տրիական ճակատամարտների մասին, որ մի ժամանակ ունեցան Հայերը Տաճկաց, Պարսից և լեռնականաց հետ: Այդ մի հերոսական պատերազմ էր: Մի բուռը Հայեր ութն օր շարունակ դիմադրում էին սարասկեար Սարի - Մուստաֆայի 10000 տաճկական արիւնդու ընդդէմ:

Նոյն Դօլգորուկովն իւր զեկուցագրի մէջ աւելացնում է, թէ Հայերը պահանջում են շօշափելի և իրական օգնութիւն զէնքի զօրութեամբ, և եթէ այժմէն իսկ այդ օգնութիւնը նոցա ղըացուի և չըտրուի, արդէն ուշ կըլինի ապագայումը գրաւել նոցա մեր կողմը:

Եթէ քաջեռանդն իշխան Դօլգորուկովը մնար Կովկասումը, շատ կարելի է, այս երկրի վիճակն այլապէս տնօրինուէր:

Բայց Դօլգորուկովն ընկաւ, կայսրուհի Աննա Յովհանովնան անուշադիր գտնուելով պաշտպանելու մեծն Պետրոսի նպատակի իրագործումը, վճռում է միանգամայն ձեռնաթող անել նորա նուաճած երկիրները:

Ռուսաց զօրքը նահանջում է դէպի Թերեքի ափուհը, իսկ հայերը կրկին Տաճիկների ձեռքից ընկնում են Պարսից իշխանութեան ներքոյ:

Նոր տիրապետողների երկիւղը ստիպում է շատ հայերի Ղա-  
րաբաղի գլանջելի բնութիւնը, նոցա օգն ու ջուրը փոխել Թե-  
րեքի ճաճային ափերի հետ: այն տեղ են ձգտում անմիջապէս  
զօրքի ետեւից նստաւ ևս: որոնք բնակութիւն էին հաստատել  
Գիւանուան և Սուրբ Խաչի բերդումը:

Այսպիսով է ահա կազմակերպւում Ղազարի Հայ գաղթակա-  
նութիւնը Թերեքի ափին:

Գուցէ չափազանց կաւեւանար գաղթականների թիւը, եթէ  
կայսրուհի Աննա Յովհաննովնան ի հաճոյս Նազիր Նահի մի հրո-  
ւարտակ չըհրատարակէր 1734 թուի, մայիսի 29ին, որով ի նշան  
բարեկամութեան առ Նահն և բարեհաճութեան առ Պարսից  
ազգն հրամայումէր, պարսկաստանից դուրս եկած բոլոր վրա-  
ցիներին, Հայերին և ուրիշ օտարազգիներին վերադարձնել կըր-  
կին Նահին, — մինչև անգամ նոցա ևս, որոնք վերադառնալու  
ցանկութիւն չունին:

Եւ թէպէտ կայսրուհի Աննայի կառավարութեան այս ան-  
բացատրելի սխալմունքը մի քանի տարուց յետոյ փոքր իշատե-  
ռւղղութեամբ մի առանձին հրովարտակի շնորհիւ, որով արգե-  
լուում էր ռուսահայատակութիւն ընդունող Հայերին Պարսիկ-  
ներին յանձնելու, բայց առաջին կարգադրութեան տպաւո-  
րութիւնը երկար ժամանակ չէր ջնջւում Հայ մտքերից:

Այսպէս թէ այնպէս, Հայերի յուսոյ միակ յենակետը, այ-  
նու ամենայնիւ, Ռուսաստանը պէտք է լինէր, նա միայն իւր  
հովանաւորութեամբ կարող էր պաշտպան հանդիսանալ հայ  
շահերին:

Եւ ահա մի քանի տարուց յետոյ 1760 թուին Անգլիայից Ս.  
Պետերբուրգ է գալիս Էմին Յովսեփեան անուամբ հարուստ հա-  
յը, որ Հնդկաստանումն ահագին միլիոններ էր զիզել: Նա  
խնդրում էր օգնել Հայերին իւրեանց անկախութիւնը ձեռք  
բերելու, իսկ այս բանի համար առաջարկում էր իւր ամբողջ  
կարողութիւնը:

Բայց կայսրուհու կառավարութիւնը նպատակ չունէր այդ  
ժամանակ Կովկասի գործերում էսպէս խառնուելու: Այդպի-  
սով Էմինի առաջարկութիւնը համակրութիւն չըգտաւ:

Այս վիճակի մէջ մնացին գործերը մինչև մեծն Եկատարի-  
նէի թագաւորիլը:

Նորա ժամանակի երբ հարաւային Ռուսաստանի ընդարձակ ամալի դաշտերը մարդաբնակութեամբ լցուեցան, Կովկասի այս կողմը (դէպի ռուսաստան) հաստատոււմ է հայկական գաղթականութիւն. ուր հիմնուում է մի նշանաւոր քաղաք, որ վերականգնաւթիւն է տալիս այն սակաւամարդ անապատ երկրին: Այդ ժամանակն էր, որ 20000 հայեր բարձի թողի արած տաճկական Ղրիմը գալիս են Դոնի եզերքը:

Արժան չընտաւ Հայերին այս գաղթականութիւնը, ահագին կորուստ, զրկանք և զոհողութիւններ բաժին ընկաւ նորանց:

Երկու շարունակ տարիներ թափառում են Հայ գաղթականները վրանների տակ Սամարայի և Նկատարինասլաւի շրջակայքում համբերութեամբ տանելով ցուրտը, տոթը և քաղցը. նոցանից շատերը չըդիմացան թափառականութեան ծանր հարուածներին և մեռան՝ աղեկէզ սրտիւ յիշելով իւրեանց հայրենի Ղրիմը, նորա վանքերն ու եկեղեցիները. իսկ մնացածներն այնու ամենայնիւ հաստատուն քայլերով դիմեցին դէպի իւրեանց նպատակը և վերջապէս Դոն գետի ափին հիմնեցին Նախիջևան քաղաքը, ուր կառավարութիւնը անխնայ շռայլեց նորանց արտօնութիւններ, օգուտներ և իրաւունքներ:

Բայց օգուտներից և արտօնութիւններից առաւել հայերին գրաւում էր մի յոյս, բարոյապէս հանգստութեան մի յոյս, մի կրօնական ազատութիւն և քրիստոնեայ պետութեան մէջ կառավարչական հաստատուն օրէնքներով իւրեանց շահերին պաշտպանութիւն. — ահա ինչ յոյս էր, որ նոցա քարշում էր:

Ճիշդ այդ միջոցումը Նկատարինան, կարծես, կամելով վերականգնաւթիւն Պետրոսի գաղափարը, դարձնում է իւր ուշքը դէպի Անդրկովկաս:

1783 թուին Ռուսաց զօրքը գրաւում է Վրաստանը և այն օրից նա դառնում է Ռուսաստանի աւատական թագաւորութիւն:

Այդ ժամանակն ահա ծրագիրներ են կազմում Հայաստանի ազատութեան համար և ամենահզօրն Պետեմիլին սկսում է ջերմ հալոդակցութիւններ շարունակել Հայոց Յովսէփ Արքեպիսկոպոսի հետ. Ասիայումը Հայաստանը մի հզօր քրիստոնեայ տէրութիւն դարձնելու մասին՝ Ռուսաց բարձրագոյն հովանաւորութեան ներքոյ:

Այսպէս նորից Հայոց խնդիրը առաւարիզի վերայ է դրուում։ Պաշտօնական շատ փառտերով ապացուցուած տեղեկութիւններ կան, որ ինքն իշխան Պօտեօմլիկը ձգտում էր թագաւորել վերածնած Հայաստանին, որը սահմանակից պէտք է լինէր Պարսկաստանին, Տաճկաստանին և Ռուսաստանին և ունենար Կասպից ծովումն իւր նաւահանգիստը։

Արդէն արտասահմանումը—Ննդկաստանում և Զինաստանում՝ նա ոսկեզօծ ամանեղէններ էր պատրաստել տուել Հայ թագաւորական զինանշաններով \*):

Այն միջոցում տպագրուած Հայոց գրքերի վերայ տպուում էին Հայ թագաւորաց դրօշները։

Յովսէփ Արք եպիսկոպոսը նամակներ գրում էր Էջմիածնի Կաթողիկոսին և շատ երեւելի հայերին ուրախ լինել և Աստուծուն փառք տալ։ Նա աղօտ կերպիւ մատնացոյց էր անում մի նշանաւոր փոփոխութեան վերայ, որ պատրաստուում էր հայերի համար՝ մեծահռչակ Հիւսիսի հոգաւարութեան շնորհիւ։

Բանը նորանումն է, որ Յովսէփ Արք եպիսկոպոսին առաջարկեցին կազմել այն դաշնագրի ծրագիրը, որ պէտք է կապուէր նախապէս Ռուսաց կայսերական և հայ ազգի մէջ։

Այս հետաքրքիր դօկումենտի մէջ առաջին տեղը բռնում էր Հայ եկեղեցւոյ լիակատար անկախութիւնն և ազատութիւնը և Հայաստանի ընտրեալ թագաւորը—լինէր նա Հայ, թէ կայսրուհու մերձաւոր անձնուէրներից մէկը—պարտաւորուում էր դաւանել Հայ կրօնը և պահպանել հայ օրէնքները։

Թագաւորի թագադրութիւնը առաջարկուում էր կատարել Ս. Էջմիածնի մէջ, ըստ օրինաց Հայոց նախկին թագաւորաց։

Մայրաքաղաք որոշուում էր Անին կամ Էջմիածինը։ Հայ թագաւորութեան դրօշը պէտք է կազմուէր Հայոց նախկին հորեք դրօշներից՝ այն է՝ Արշակունեաց միագլուխ արծիւը, քրիստոնէութեան ժամանակի Գառն Աստուծոյ և Փղբը Հայոց երկու առիւծները։

Ի յիշատակ Հայաստանում տեղի ունեցած երեք փառաւոր պատմական դէպքերի, Հայաստանում հաստատուում էր երեք

(\*) Մի այդպիսի յաղճապակեայ սափոր հայ դրօշը վերան պահուում է Տիֆլիսի թանգարանում։

շքանշան, առաջինը՝ Նոյեան տապանի անուանով՝ ծիածանին նմանացրած երեք գոյնով—կարմիր, կանաչ և կապոյտ, երկրորդը՝ սուրբ Գրիգոր Լուսավորչի անուանով և երրորդն՝ ի պատիւ Փրկչական անձեռագործ դաստառակի:

Քաղաքականապէս տնօրինուում էր, որ Հայաստանը գրունուի Ռուսաստանի հովանաւորութեան ներքոյ: Մի փոքրաթիւ ռուսական բանակ պէտք է մնար Հայաստանի մէջ՝ նորա ռազմաները ծածկաց և Պարսից արշաւանքներից պաշտպանելու աղաքաւ, իսկ Հայ թագաւորների որդեկերանցից մէկը մնալու էր շարունակ կայսեր պալատումը: Հայոց թագաւորութիւնը պարտաւորուում էր իւր հանքերից արտահանած ոսկուց և արծաթից մի որոշ մասն յատկացնել ռուսաստանին: Պատերազմական դէպքերում երկու պետութիւններն ևս պարտական էին միմեանց օգնութիւն տալ:

Այս դաշնագրութեան մի ամենահետաքրքիր յօդուածն այն էր, որ, Հայերը պահանջում էին, որ իւրեանց աշխարհի մէջ ստրկութիւն չընեսր մտնէր, ինչպէս իւրեանց ազգային բնաւորութեան մի տարօրինակ և հակառակ երեւոյթ: Այս մասին նոքա մատնացոյց էին անում իւրեանց պատմութիւնից այն դէպքը, որ երբ Յայները տիրելով Հայաստանին կամեցան Հայերից ստրուկներ տալ իւրեանց իշխաններին, Հայիրը թողին նորանց և մտան Բաղդատու խալիֆների հպատակութեան ներքոյ, առաւել գերադաս համարելով խալիֆների ծանր քաղաքական ճնշումները իւրեանց ներքին ընտանեկան ազատութեան կորստից:

Այս ծրագիրն իրագործելու համար մեծ զօրութիւն և դրամական ոյժ էր հարկաւոր, միակ յոյսը բնականապէս էմին Յուսէփեանի առաջարկութիւնն էր, որ մի քանի տարի առաջ նուիրում էր իւր միլիօնները Հայաստանի ազատութեան գործին: Սակայն էմինը կենդանի չէր այժմ և նորա հարստութիւնը ժառանգական ցեղը վերջանալու օրէնքին համաձայն մնացել էր Օսոմ-ինգիական բանկին:

Այս անգամին ևս գտնուեցաւ ոմն Շաւից-խան՝ նոյնպէս Հնդկահայ, որ իւր լիքը քսակը առաջարկեց Հայաստանին: Սակայն ըստ նորա կարծեաց պտտերազմ սկսելու կարիք չըկար, հարկաւոր էր ոսկւով գնել Հայաստանը ծածկաստանից և Պարս-

կատարանից:

Այս մեծահարուստ անձը առաջարկում էր Բօրչալուում, Լօռում և Երեւանի նահանգում մշակել լեզակի, շաքարի եղէգնի, բամբակ և սուրճ, հիմնել գործարաններ և այգւիսոյ դարերոյ աւեր և քարուքանդ աշխարհին միանգամից վերակենդանութիւն տալ:

Ուրեմն զրամագլուխն ի նկատի և պատրաստ էր և մնում էր գործ սկսելը:

Վճռուեցաւ սկսել Ղարաբաղի խանութիւնից—այն է՝ գահալէժ անել Իբրահիմ խանին և նորա տեղը հայ կառավարիչ կարգել: Բուն ձեռնարկութիւնը գիտաւորութիւն կար սկսել առաջիկայ 1781 թուի ամառը և զօրքն արդէն պատրաստուում էր:

Բայց այն ինչ ծրագիրը գրուում էր և իրագործութեան պատրաստութիւններ տեսնուում էին, քաղաքական հանգամանքները խիստ խճճուեցան:

Օմմար խանը աւերում է Վրաստանը, չընայելով որ Ռուսաց զօրքն այդ ժամանակ նստած էր այն տեղ և պատրաստուում է դիմել Ղարաբաղի վերայ: Ռուսաստանն այդ միջոցումն երկրորդ Տաճկական պատերազմն է սկսում և էլ հնարաւորութիւն չի ունենում Վրաստանը պաշտպանելու:

Հայաստանը նորից բարձի թողի մատնուում է իւր ճակատագրին և իւր ձգտումների համար ենթարկուում է վրէժ-խընդրութեան հարուածներին: Պարսիկներն ու Ղարաբաղի Իբրահիմ խանը սարսափելի հալածանքներ և բռնութիւններ են գործ դնում հայերի դէմ: Հայաստանը նորից արիւնշաղախ է լինում, ռուսաստանին հաւատարիմ և անձնուէր մընացած բոլոր մէլիքները կոտորուում և իսպառ ջնջուում են և մի քանիսին միայն յաջողում է փախչել Տփլիսի հերակլ թագաւորի մօտ:

Ոչ հայերն և ոչ Ռուսաց կառավարութիւնը չէին կարողանում այնու ամենայնիւ հրոժարուել այն նուիրական գաղափարից, այն նպատակից, որ պատմական հանգամանքների ընթացքներն ստեղծել էին և մեծն Պետրոսը նախատեսել էր:

(Նարսէակէի)

(Թարգմ.) Պ. Պ.